

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4-րդ դասարան

Մ Ա Յ Ր Ե Ն Ի

ԹԵՍՏ 3

Շրջան, քաղաք _____

Ուսհաստատություն _____

Դասարան _____

Ա. Ա. Հ. _____

Ամսաթիվ _____

Սիրելի՛ աշակերտ

Թեստ-գրքույկն ընդգրկում է 15 առաջադրանք:

1-6-րդ առաջադրանքները կատարել ըստ տրված տեքստի:

1-3-րդ, 5,6-րդ և 15-րդ առաջադրանքներում գրել պատասխանը:

4-րդ և 9-12-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ: Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը (համարները) վերցնել շրջանակի մեջ: Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, նշված պատասխանի համարի վրա դնում եք X նշանը ~~3~~ և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

7,8-րդ և 14-րդ առաջադրանքները լրացնել:

13-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում:

Թեստ գրքույկի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0:

Թեստ գրքույկի առավելագույն միավորը 15:

Աշխատանքի կատարման համար տրվում է 45 րոպե:

Ցանկանում ենք հաջողություն

1-6-րդ առաջադրանքները կատարել ըստ տեքստի

Որսորդը վերադառնում էր որսից և անցնում էր այգու ծառուղիով: Նրա արջկից վազում էր շունը: Հանկարծ շունը դանդաղեցրեց քայլերը և սկսեց արաջ գնալ գաղտագողի, կարծես որսի հոտ էր արել:

Որսորդը նայեց ծառուղու երկարությամբ և տեսավ մի ճնճղուկի ձագ, որի կտցի շուրջը դեղնավուն էր, գլուխը ծածկված էր աղվամազով: Ձագուկը վայր էր ընկել բնից և նստած էր անշարժ ու անօգնական:

Շունը դանդաղորեն մոտենում էր նրան, երբ հանկարծ, մոտիկ ծառից պոկվելով, մի մեծ սևակուրծք ճնճղուկ քարի պես ընկավ հենց շան դնչի արաջ: Նա աղիողորմ ձիչ էր արձակում և թռիչք գործում դեպի շան երախը:

Նա ցանկանում էր ազատել իր ձագուկին: Ամբողջ մարմնով դողում էր: Մայր ճնճղուկը իրեն զոհում էր՝ ձագուկին փրկելու համար:

Շունը կանգ արավ և հետ քաշվեց... երևի նա էլ հասկացավ մայրական ուժի մեծությունը: Որսորդը շտապեց հետ կանչել շփոթված շանը և նրանք հեռացան:

1-3-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

1. Ինչո՞ւ շունը դանդաղեցրեց քայլերը:

Պատասխան՝ _____ :

2. Ի՞նչ տեսավ որսորդը:

Պատասխան՝ _____ :

3. Երբ շունը մոտեցավ ճնճղուկի ձագին, ի՞նչ կատարվեց այդ պահին:

Պատասխան՝ _____ :

4. **Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:**

Ինչպե՞ս էր պայքարում սևակուրծք ճնճղուկը:

- 1) Նա ցանկանում էր ազատել իր ձագուկին:
- 2) Անհանգիստ դեսուդեն էր թռչկոտում:
- 3) Շնից վախենալով՝ հեռանում է:

5,6-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

5. Տեքստից դուրս գրել մեկ բարդ բառ և բաժանել բաղադրիչների:

Պատասխան՝ _____ :

6. Տեքստից դուրս գրել մեկ նախադասություն և ընդգծել ենթական:

Պատասխան՝ _____ :

7, 8 -րդ առաջադրանքներում լրացնել աղյուսակը

7. Տրված բառերով և ածանցներով կազմել նոր բառեր:

<i>Արմատ</i>	<i>Նախածանց</i>	<i>Նոր բառ</i>
անել	դժ	
առաջ	ան	
հոտ	ընդ	
գոհ	չ	

8. Խմբավորել հետևյալ բառերը:

ամրակազմ, ուղտ, երեսունինը, չորրորդ, երկնակամար, նուռ, աշխատավոր, հայություն, դեղձ

պարզ	բարդ	ածանցավոր

9, 10-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

9. Նախադասությանը համապատասխանող բառն է՝

Երկու գյուղերի *1) մինչև, 2) միջև* հեռավորությունը հինգ կիլոմետր է:

10. Ո՞ր բառակապակցության մեջ է ածականը գործածված փոխաբերական իմաստով:

- 1) բազմերանգ ծաղիկներ
- 2) ձյունափայլ կուրծք
- 3) տխուր հուշեր
- 4) չարաձճի երեխա

11, 12-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

11. Ո՞ր բառերի ուղղագրությունն է ճիշտ:

- 1) օգնել, 2) բերգահավաք, 3) եռեսուն, 4) անընդմեջ, 5) առողջ, 6) ճամբար, 7) խորհուրդ

12. Ո՞ր բառակապակցություններն են դարձվածքներ:

- 1) աշխարհ գալ, 2) մագերը կտրել, 3) երեք խնձոր, 4) մատը կտրել, 5) երես առնել, 6) աչքից ընկնել, 7) գլուխ տալ

13. Համապատասխանեցնել.

Քառեր

- 1) ջինջ
- 2) բարև
- 3) կտրիճ

Հականիշներ

- ա) երկչոտ
- բ) մաքուր
- գ) պղտոր
- դ) ցտեսություն
- ե) խիզախ
- զ) ողջույն

Պատասխան՝ 1-____, 2-____, 3 -____

14. *Լրացնել.*

մատուռ բառի բացատրությունն է՝ _____ :

15. *Չրել պատասխանը:*

Ո՞ր ստեղծագործությունից է մեջբերումը:

Տեսավ՝ քառասուն ավազակ դևեր
 Քառասուն կովերը բերել, մորթել են,
 Լցրել քառասունկանթանի պղնձի մեջ,
 Օջախ են արել, դրել օջախին,
 Քլթքլթալեն եփում են:

Պատասխան՝ _____ :

Լրացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բալանոց իդրակով	

Ստուգող՝ _____ Ա.Ա.Հ _____ ստորագրություն